Մրցույթ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովակ գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովակ գյուղի միջնակարգ դպրոց»
պետական ոչ առևտրային կազմակերպության խորհուրդը
«ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովակ գյուղի միջնակարգ դպրոց»
պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր
պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարում է մրցույթ:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. ՀՀ քաղաքացիությունը,
2. «Հանրակրթության մասին » օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1. դիմում՝ կազմակերպության խորհրդի նախագահի անունով,
2. ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը /բնօրինակի հետ/,
3. Հաստատության ղեկավարման իրավունքի /հավաստագրի/ պատճենը /բնօրինակի հետ/
4. Տվյալ կազմակերպության զարգացման ծրագիրը / որը հավակնորդը կարող է ներկայացնել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը, այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով/, որը խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հրապարակման տվյալ դպրոցի պաշտոնական կայքում, ինչպես նաև տրամադրում է խորհրդի մյուս անդամներին,
5. Ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Փաստաթղթերն ընդունվում են 2021թ. սեպտեմբերի 27-ից մինչև հոկտեմբերի 15-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից Ծովակ գյուղի միջնակարգ դպրոցում:

Մրցույթը տեղի կունենա 2021թ-ի հոկտեմբերի 29-ին ժամը 14:00-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովակ գյուղի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել 077-73-69-75

Հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Ծովակ 1փողոց, 1 նրբ, շենք 1

Հեռ. 077-73-69-75

Էլ. փոստ՝ tsovak@schools.am

Վեբ կայք https://tsovak.schoolsite.am/